



Մարտին  
Վալդեազարյան, 1954թ.



Մարտին  
Վալդեազարյանը ու  
Լևան Մամուկանը,  
1960-ականներ



Երևաննախագիծ  
իմսոխտադրի  
Նստուղային  
մյազանքի մի  
խումբ Երասիլցունի,  
այնի շրջապատում,  
1950-ականների վերջը



առաջին ստեղծագործությունները հնչել են այդ կլինտոսի կատարմամբ:

1966-1972թթ. Մարտին Վարդազարյանը ղեկավարել է կլինտոսից հետո Պայաստանի ռադիոյի և հեռուստատեսության հաջորդ երաժշտախումբը: Սկզբում դա եստրադային համույթ էր, որն արդեն 1972թ.-ին մոտ սովորաբար դարձավ քիզ-բենդ: Այդ նվագախմբի ֆոնդային քազմաթիվ ծայնագրությունների մեջ կան հայ կոմպոզիտորների, ինչպես նաև Մ. Վարդազարյանի ջազային ստեղծագործություններից:

Մ. Վարդազարյանը համարում է, որ երաժշտությունը ժանրերի քաժանելը քացառապես պայմանական երևույթ է: Ժանրերն, ըստ էության, երաժշտության արտահայտվելու տարբեր միջոցներ ու (եզուներ են, որոնք անհրաժեշտ է հասկանալ և կարողանալ տիրապետել: Դա քարծրաղվեստ կոմպոզիտոր-

ներին ներհատուկ մտնեցում է, ովքեր իրենց ստեղծագործությանը ապացուցում են դրանց կենսունակությունը: Նա գրել է սիմֆոնիա, Բ. Բարտոկին նվիրված սիմֆոնիկ պոեմ, Ա. Խաչատրյանին նվիրված դաշնամուրային կոնցերտ, կվարտետ, կոնցերտինո՝ ֆլեյտայի համար, ստեղծագործություններ՝ երգչախմբի համար: Նա 40-ից ավելի կինոնկարների և 100-ից ավելի թատերական ներկայացումների երաժշտության հեղինակ է: Նրա քազմաթիվ երգերից հարկ է նշել՝ «Սա երևանն է», «Քեզ կանչում են միշտ», «Տեմպ, ոչիթմ, մեղեդի», «Դնչ է պատահել»: Պայ ջազմենները կատարել են նրա ջազային ստեղծագործությունները՝ «Կենց նույն պատճառով», «Կտրված կրունկ», «Բյուզի շուրջ», «Անանուն», «Եքսպրոմտ», «Խաչմերուկ»:

Մ. Վարդազարյանը մեծ ջազ-նվագախմբի գիտակ է: Նա համագործակցել է 4. Օրբելյանի ղեկավարած Պայաստանի եստրադային նվագախմբի հետ: 1990թ.-ից աշխատում է Ե. Երզնկյանի ղեկավարած Պայաստանի ռադիոյի և հեռուստատեսության ԷՄՆ-ում՝ որպես դաշնակահար և խմբավար-խորհրդատու: Այդ նվագախմբի համար Մ. Վարդազարյանը վերադաշնակել է ջազային այնպիսի կոմպոզիցիաներ, ինչպիսիք են՝ «Until I Met You» (R. Noble), «I'm Beginning to See the Light» (H. James, D. Ellington), «Shiny Stockings» (F. Foster), «Ya Gotta Try» (S. Nestico):

Մարտին Վարդազարյանը Պայաստանի ժողովրդական արտիստ է (2012), Երևանի պատվավոր քաղաքացի, Կոմիտասի անվան ԵՊԿ-ի պրոֆեսոր, տարբեր մրցանակների ու պարգևների կրող:

Երևանի փողոցների վրա կախ արած հսկայական քազմաթիվ վահանակների մեջ կար մեկը՝ ժպտադեմ Մարտին Վարդազարյանի նկարով, ներքևում՝ մակազրույթում. «ես սիրում եմ քեզ»:

Եթե ձեռքս հասներ, ես կավելացնեի.

**«Մենք էլ քեզ ենք սիրում»:**



Արակ Բակունցը, 1977 թ.

Ա. Բակունցը 1979 թվականից դասավանդում էր Քայիամերգի էստրադային ստուդիայում, որի տնօրենը դարձավ 1985 թ.-ին

1992 թվականից, այդ ստուդիայի հիման վրա, Քայաստանի մշակութի նախարարությանը կից ստեղծվեց Երևանի էստրադային և ցազային արվեստի թոլեջ:

Ակսել Բակունցը մինչև իր կյանքի մայրամուտը ղեկավարում էր այդ երիտասարդ երաժիշտ կատարողների ուսումնասիրության դարբնոցը:

2006 թ.-ին Ակսել Բակունցին շնորհվեց Քայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:



**Էվինա Մակարյան**  
(1960-2007)

Չինգ-Չինգ (Է. Մակարյան)

Արամ Խաչատրյանն առաջին անգամ լսելով դեռևս պարմանուտի էվլինայի երգը, բացականչեց. «Դրա շք է: Վարպետը չէր սխալվում»:

— Էվինա Մակարյան...  
Այս անունն առաջին հերթին ինձ հիշեցնում է 1968 թ.-ի զարուհը, «Կոտունկա» համերգները՝ Քաջիլիարմոնիայի Մեծ դահլիճում: Նա քեմ էր դուրս գալիս կարմիր տաքատուվ կոստյումը հագին, և անմիջապես սկսվում էր կախարհանքը...



Պեռնա տասնութը չբոլորած արջնակը հիացնում էր բնածին տաղանդին հատուկ՝ երաժշտության հետ օրգանական միաձուլմամբ: Նրա երգը դյուբիլ էր: Բարձրակարգ երաժշտամուտքունը թույլ էր տալիս նրան միանշանակ լավ կատարել տարբեր ոճի երգեր ֆրանսիական ու իտալական լիրիկական երգեր, երգել՝ Ռեյ Չարլզի ու «Յեսես»-ի երգացանկերից, հայ հեղինակների ստեղծագործություններ:

Էլվինան շատ էր սիրում կատարել Ա. Տոբիժի ցուսահովաները, ընդ որում՝ դաշնամուրի վրա նվագակցելով ինքն իրեն և ցուցադրելով իր ցագային որակները՝ օգտագործելով վոկալ-հանպատրաստից երգեցողությունը՝ սքեթը:

Այդ տարիներին էլ նա ավարտեց Ռ. Սելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրի դասարանը:


«Կռունկից» հետո, Կ. Օրբելյանի ղեկավարած Գայաստանի պետական էստրադային նվագախմբի և Գայաստանի ուղիղի և հեռուստատեսության ԵՄՆ-ի հետ ելույթներն էին:



Ա. Արդաշանյան ու Ա. Թութուցյանը Թբիլիսի, 1979թ. ի մայիս



Ա. Տեր-Թադևոսյան, Թբիլիսիի ֆիլմերի ֆեստիվալի սրճարանում, 1979թ. ի մայիս



Ա. Չաքրալյան «Շատ համեղ է Թբիլիսիի խիմալը», 1979թ. ի մայիս



**Տաթևիկ Դովհաննիսյան**  
(1955)

*You'll Have To Swing It (Mr. Paganini) (S. Coslow)*

1970-ականների կեսերից Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս ջազի երկնակամարում միանգամից փայլեց տաղանդավոր երգչուհին Պայաստանից, ում շուտով պիսի կոչեին «Խորհրդային ջազի առաջին լեդի»

Յեռավոր 1960-ականներին երևանցիների սիրելի «Կասկադի» մոտ գտնվող տներից մեկում մի փոքրիկ աղջնակ էր ապրում...

Սկիզբը հեջիաթի է նման, կմտածեք դուք: Սա հենց հեջիաթ է, որ կա, հեջիաթ մի աղջնակի մասին, ով հետո պիսի դառնա արքայադուստր և խորհրդային ու հայկական ջազի «Լեդի»:

Ես, որ արդեն սիրահարված էի ջազին, գիտեի, որ այդ տանն ապրում է մի փոքրիկ, սևաչա աղջնակ, ով ամբողջովին թաթախված է երաժշտությանը, չէ՞ որ նրանց տանը ջոկորն էլ երաժիշտներ էին, և գիտեի, որ հայկական հրաշալի երգերի ու դասական երաժշտության հետ մեկտեղ նա սիրում է նաև ջազը, սիրում է ինքնամոտաց, լսում է Օսկար Պետրոսյանի, Էռոլլ Գարների, Դյուկ Էլլինգտոնի, Ջանոնի Բեյսիի կատարումները, իսկ ջազի Առաջին լեդի էլլա Ֆիթցերալդը նրա կուռքն է: Այն ժամանակ կանխատեսել անգամ ինքնավոր չէր, որ 1970-ականներին այդ տաղանդավոր հայուհուն կհանաչեն ու կսիրեն հսկայական Խորհրդային Միության մեծ ու փոքր քաղաքներում:

Երա սրընթաց վերելքը ջազում վստահ էր ու համոզիչ:

Դա, իհարկե, Տաթևիկ Դովհաննիսյանն էր:

Ես չեմ պատկերացնում, թե երաժշտությունից բացի Տաթևիկ Դովհաննիսյանը էլ ինչ կարող էր նախընտրել: Ի հերքումն ասացվածքի, թե՛ «բնությունը համազտանում է երեխաների վրա», երգչի ու երաժիշտի տաղանդը նա ժառանգել է ծնողներից՝ անգուղակակ երգչուհի Օֆելյա Պամբարձումյանից և հայտնի երաժիշտ, ցամաքահար Լորայր Դովհաննիսյանից: Տաթևիկի ավագ եղբայրը՝ Դովհաննես Դովհաննիսյանը, ջութակահար է, Պայաստանի ռադիոյի և հեռուստատեսության ԵՄԼ-ի լարային խմբի կոնցերտմեյստեր, ջազի սիրահար, և զարմանալի չէ, որ Դովհաննիսյանների տանը, բացի հայկական երաժշտությունից, մշտապես հնչում էր նաև դասականն ու ջազը:

Փոքրիկ Տաթևիկի ջազային հաջողությունների մասին ինձ միշտ պատմում էր ընկերս՝ Բորիս Չաղայանը, որ Դովհաննիսյանների հարևանն էր, մի հարկ վերև էր ապրում: Սի անգամ ասաց. «Չիկո, պատկերացնո՞ւմ ես, Աչոնը «Mr. Paganini» է երգում»: Ճիշտն ասած, ջիվախապի, քանի որ ծանոթ էի էլլա Ֆիթցերալդի կատարմանը հնչող այդ քարո երգին: Բայց

Նրա նվաճումներից են կիթառահար Լարրի Կորիելի, սաքսոֆոնահարներ Չառլզ Դևիսի, Մատանա Ռոբերտի, Չառլզ Օուենսի, երգչուհի Դեբորա Դևիսի և հանրահայտ էլի ուրիշ շատ երաժիշտների հետ համատեղ ելույթները:

Ա. Սաթյանը զանազան ոճերի երաժիշտ է, նվագում է ինչպես ջազային ստանդարտներ, այնպես էլ լատին և ֆանք ոճի երաժշտություն: Նրա կոմպոզիցիաներին, վերադաշնակումներին և կատարողական արվեստին բարձր գնահատական են տվել Լարրի Կորիելը, Ալֆրեդո Մոուսոնը, լեզենդար դաշնակահար Աիմադ Ֆամալը:

Իր մասնագիտական հարուստ գիտելիքները Ա. Սաթյանը փոխանցում է Լիբանանի ազգային կոնսերվատորիայի (Բեյրութ) ուսանողներին, որի պրոֆեսորն է: Նա դասավանդում է դասական դաշնամուրի



ամբիոնում և գլխավորում է ջազային երաժշտության ամբիոնը, որտեղ ուսուցումը տարվում է իր կազմած ծրագրով:

Երևանի ջազմենների միջոց ուրախ են հարազատ քաղաքում տեսնելու Ա. Սաթյանին և նրա հետ կիսելու համատեղ ելույթների ուրախությունը:



Չառլզ այ՛ Արթուր Սաթյան, Ապառտոս Անվեզան, Երվանդ Ասրադյան, Չառլզ Դևիս, Սամել Չաքրի, Բեյրութ, 2009թ.



**Սիմոն Դովմազյան**  
(1961)

*Third Plane (R. Carlet)*

Ժամանակակից ցազի կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ շեփոխահար և կոմպոզիտոր Ուիմբոն Սարսալիան իր վարպետության-դասերից մեկի ժամանակ ցազի համալսարանում մասնաբաժինը (ոչ թե մեկը) համեմատում է ավտոմեքենայի հետ. «Թմբուկները, սառում է նա,- դա շարժիչն է: Կոմպոզիտորը՝ անիվները, իսկ դաշնամուրը՝ թափքը»: Ընդ որում, մեծագույն դերը տալով կոմպոզիտորին, նկատում է. «Ամենագերազանց, հզոր շարժիչի դեպ-

քում, բայց առանց անիվների, ոչ մի մեքենա տեղից չի շարժվի: Իսկ անիվներով, նույնիսկ առանց շարժիչի, մեքենան կարող է շարժվել»:

Պիանայի համեմատություն:  
Ահա այդպես, մի քանի գույգ անիվներից մեկը, որոնց վրա գլորվելով շարժվում է երևանյան ցազը, Սիմոն Դովմազյանն է՝ մեր Այոման:

Սերը երաժշտության նկատմամբ դրսևորվեց դպրոցական տարիներին: Այն ժամանակ ընկերների հետ միասին հրապուրվեց «Beatles»-ով, նույնիսկ ձեռքն առավ կիթառն ու ինքնուրույն ինչ-որ բաներ սովորեց: Այնուհետև, երաժշտական հրապուրանքների շարքում հայտնվեցին «Deep Purple»-ը, «Led Zeppelin»-ը, Ռեյ Չառլզը, Սթիվի Ուանդերը, Էլ Ֆերրոուն, Ջորջ Բենսոնն ու Պերրի Պեյկոկը (ջազ-ռոք ձևում): Սովորական կիթառը փոխարինեց քաս-կիթառով, երկար նստում էր մագնիտաֆոնի մոտ ու լսողությանը քասային պարտիաներ «դուրս բերում»:

Սյոմայի ծնողներն ուզում էին, որ որդին ինժեներ դառնա և համարում էին, որ երաժշտությունը նրա համար ընդամենը հրապուրանք է: Պե՛նց նրանց համառ պնդմամբ էլ միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանից հետո ընդունվեց Կապի տեխնիկում: Տեխնիկումն ավարտելուց հետո ծառայեց քանակում: Բանակից հետո աշխատանքի անցավ «Ալգորիթմ» կազմակերպությունում, որպես տեխնիկ: Այնտեղ էլ հայտնվեց ինքնագործունեություն գուցաբերող երաժիշտների շրջապատում:

«Իմ կյանքում ամեն ինչ հավանաբար նախկին հունով կընթանար: Կարծում էի, թե երաժշտության համար ուշագեղ եմ, ընդ որում, արդեն ընդունվել էի Պուլխտեխնիկական ինստիտուտ: Սակայն մի օրն ամեն ինչ փոխեց: Այդ օրը լսեցի «Third Plane» ծայնասկավառակը:

Պերրի Պեյկոկ, Ռոն Ֆարտեր, Թոնի Ուիլյամս:  
Ձազը միանգամից ներխուժեց հոգուս մեջ ու այնտեղից դուրս մղեց մնացյալ ողջ երաժշտությունը...»



«Art Voices» խումբը



Աթուր Գրիգորյան



Սանուկ Դազարյան

Ձախեց այ՛  
 Եղգատ Ավետիսյան,  
 Աթուր Գրիգորյան,  
 Սանուկ Դազարյան,  
 Լևոն Գուլիմյան,  
 Պերճ Լահապետյան,  
 Ակազ Ապրիլյան,  
 Զակեն Եսայան

«Art Voices» խումբը ստեղծվել է 2005 թ-ին, այն ժամանակ դեռևս բոլորովին երիտասարդ երաժիշտների կողմից: Իր գոյության շատ կարճ ժամանակում այն դարձավ մեր ցավալին բնմում նկատվողներից մեկը, հասցրեց հրաշալի ելույթ ունենալ Մոսկվայում, Փարիզում և դառնալ Բուխարեստի ցագ-մրցույթի Գրան-պրիի մրցանակակիր (2008): Առաջնորդող երաժիշտներն ու մտահոյացումների հեղինակները տաղանդավոր Սանուկ Դազարյանը (խմբի ղեկավար, դաշնա-





Շուգամ Գևորգյանը ու «Art Voices» խումբը

Լախար, ստեղնաշարայինի նվագաձուև) և Արթուր Գրիգորյանն են (սաքսոֆոնահար)։

Նրանց ինքնօրինակ կոմպոզիցիաները «Art Voices»-ի նվագազանկի մեծ մասն են կազմում։ Երկրան էլ այքի են ընկնում բարձր երաժշտականությանը, ունկնդրին իրենց մենակատարումներով գրավելու ունակությամբ։

Երաժշտախմբի հնչողության մեջ իրենց ավանդն են ներդնում շեփորահար Լևոն Գուչինյանը, սաս-կիթառահար Էդգար Ավետիսյանը, փայլուն, աշխույժ թմբկահար Գեորգ Նահապետյանը։ Իսկ հայկական ժողովրդական բլուև և զուռնա գործիքներին վարպետորեն տիրապետող Ավագ Սարգսյանը խմբի հնչողության մեջ ներմուծում է իր առանձնահատուկ հնչերանցը, որն ընդգծում է խմբի հաղորդակցումը ֆոլկ-ջազ ոճին։

Ի պատիվ «Art Voices»-ի երաժիշտների, պետք է հավելել, որ նրանք ծանոթ են ջազային ստանդարտներին, ինչն ընդլայնում է մեյնստրիմ-ջազի կողմնորոշում ունեցող երաժիշտների հետ աշխատելու նրանց հնարավորությունները։



Չափից արժեքավոր Ավագ Սարգսյան, Մանուկ Ղազարյան, Արթուր Գրիգորյան, Չամբոս Ըստյան, Գեորգ Նահապետյան, Լևոն Գուչինյան



Արմեն Չիկո Թուրքումբազյան

International  
Jazz Day • 2014



Վահագն Գալստյան



Ֆեդոտիկո Անդրեյև

Ձագի միջազգային օրն այս անգամ ևս նշվեց քաջօթյա մեծ համերգով: Այս անգամ Կասկադ համալիրի տարածքում տոնական համերգը մեկտեղել էր հայկական ու համաշխարհային քանազան ջազմենների և ցազ բենդերի: Արմեն Թուֆուճյան ("Chico & Friends"), Կահագն Պայրապետյան, Պայաստանի պետական ջազ-նվագախումբ՝ Արմեն Պյոսնունցի ղեկավարությամբ, Կարեն Մամիկոնյան և այլք: Ձագի օրվա երևանյան հյուրերն էին Սակեղունիայում և աշխարհում ճանաչված ջազմեններ Գարո և Դիրան Թավիջյան եղբայրները և Վորան Փեշոյան: Օրվա առթիվ կոմպոզիտոր, դիրիժոր Մելիք Մավիսակալյանը և կոմպոզիտոր, դաշնակահար Ստեփան Շաքարյանը երևան քաղաքի երաժշտարվեստում ներդրած նշանակալի ավանդի, զեղարվեստական արժեքների ստեղծման և տարածման համար երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի անունից պարգևատրվեցին քաղաքապետի Ռսկե մեդալով:



\*\*\*



Մելիք Մավիսակալյանը



Ստեփան Շաքարյանը

2015 թվականի օգոստոսին Կանո Մովսեսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Ձագի Պայկական ասոցիացիան, որի նպատակն է Պայաստանում հնարավորինս խթանել ջազարվեստի զարգացումը և տարածումը:

Ձագի Պայկական ասոցիացիայի ջանքերով և մի շարք կազմակերպությունների ցանքերով (Յաքրոմ Armenia, Rostelecom, Երևանի «Ararat» կոմյակի գործարան) կազմակերպվեց երևան-2015 միջազգային ջազ-փառատունը:

Պեկտեմբերի 16-ին երևանի Շ. Ազնավուրի հրապարակում տեղի ունեցավ մամլո ասուլիս, որին ներկա էին փառատունին մասնակցող տեղացի և օտարերկրյա երաժիշտները, Ձագի Պայկական ասոցիացիայի հիմնադիր-նախագահ Կանո Մովսեսյանը, բազմաթիվ լրագրողներ, հյուրեր:

Փառատունային համերգները կայացան Կարեն Դեմիրճյանի անվան համալիրի համերգային դահլիճում հոկտեմբերի 17, 18 և 19-ին:

# Նվիրում Զիկոյին

Ջազ համերգ  
Նվիրված Արմեն  
Չիկո Թութունջյանի  
հիշատակին

դուրանենտալ ֆիլմի պատրաստման աշխատանքները:  
եվ նկավ նոյեմբերի 27-ը՝ կյանքիս թերևս ամենահուզումնալից և պատասխանատու օրերից մեկը: «Այրամ հաջատրյան» համերգասրահը (եվիլեցուն էր: Բեմում միաժամանակ մեր երկու պետական մեծ նվագախմբերն էին (բիզ քենդերը)՝ հայաստանի պետական ջազ նվագախումբը՝ Արմեն Պրանունցի ղեկավարությամբ և հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության մեծ նվագախումբը՝ Երվանդ Երզնկյանի ղեկավարությամբ: Պիշատակի երեկոն քաջվից հյուս էլլինգոնի "Take the A Train" ստուդիոսագրությունը, որով շուրջ 20 տարի տարբեր հեռուստաալիքներով սկսվում էր Արմեն Թութունջյանի հեռիմակային Ջազի ժամը հաղորդումը: Անծեկրանին հայտնվեց երեկոյի հերոսը: «Ողջու՛յն: Ջազի ժամն է եթևրում»

Պիշատակի համերգ կազմակերպելու գաղափարը ծնվեց Չիկոյի մահից մի քանի օր անց: Մշակույթի նախարար Արմեն Ամիրջանի մոտ սկսվեցին համերգի կազմակերպման քննարկումները՝ Սարտին Վարդազարյանի, Երվանդ Երզնկյանի, Արմեն Պրանունցի, Վահագն Պայրապետյանի, Ջազի հայկական ասոցիացիայի նախագահ Կամո Սուվսայանի, Գուրեն Գրեյի Արմևս ընկերության գործադիր տնօրեն Վիկտորիա Ալալյանի, ռեժիսոր Սուրեն Արեբենցի և իմ մասնակցությամբ: Պիշատակի համերգներին քննորոշ կոնցեպտուալ տարրեր լուծումներ քննարկելուց հետո կանգնեցինք այն գաղափարի վրա, որ այս համերգը իր թվանդակային լուծումներով պետք է լիներ Արմեն Թութունջյանի հեռիմակային Ջազի ժամը հաղորդման շարունակությունը, որտեղ մեկ համերգի ձևաչափում պետք էր պատմել հայկական ջազի հատկապես վերջին 30 տարիների պատմությունը, այդ պատմության հիմնական դերատարների, ինչպես նաև այդ պատմությունը Չիկոյի հետ միասին կերտած փայլուն արվեստագետների մասին: Իսկ ո՞վ պետք է պատմեր այդ պատմությունը, ով պետք է լավագույնս ներկայացներ իր ժամանակակիցներին, ավագ և կրտսեր գործընկերներին, ուսանողներին Ի հարկե հենց ինքը Չիկոն:

Այս լուծումը համերգային միջավայրում ստանալու հարցում իր աջակցությունը ցուցաբերեց ռեժիսոր Սուրեն Արեբենցը, ով Վիկտորիա Ալալյանի նախաձեռնությամբ արդեն սկսել էր Արմեն Թութունջյանի մասին





Երևան, 27 նոյեմբերի, 2017 թ., «Մրամ Խաչատրյան» մեծ համերգասրահ



Մարտին Վարդապետյան



Երվանդ Երզնկյան



Լևոն Մարտիրոսյան

Միհրոն Դովազյանը և Հակոբ Օրդաբեկյանը

Դահլիճն անմիջապես լցվեց սիրով, կարոտով, թախիծով և անմոռանալի հիշողությամբ։  
 Մեր անվանի ցածնեցներին տեսանյութերի միջոցով ներկայացնում էր Չիկոն, իսկ երաժիշտները խոսքով և երաժշտությամբ իրենց հարզանքի և երախտիքի տուրքն էին մատուցում լուսահոգի ընկերոջը, ուսուցչին և պարզապես իր գործի նվիրյալ մարդուն՝ լեգենդար Չիկոյին։